

9 Յայտնեին այնուհետեւ համարձակեալք ի գիշերի միում զբանս մտածութեանն իւրեանց Մամիկոնէին Վահանայ. որոյ իբրեւ լուեալ՝ ասէր ցամենեսեան. «Գիտեն ոմանք, թեպէտ եւ ոչ ամենեքեան¹ որք էք ի խորհրդիս յայս, թէ ո՛րպէս վտանգեալ տագնապիմ յամենայն ժամու յաղագս սուտ անուանս, զոր ատելութեամբ կրեմ յանձին իմում. զի մերձեալ յերեկոյն՝ կասկածեմ ցառաւաւտն, եւ հասեալ յառաւաւտն՝ երկնչիմ ցերեկոյն, հայելով ի փութանակի եւ յանյայտ² կենցաղոյս վախճան, որ երագահաս է եւ յանկարծակի, թէ գուցէ այսպիսի անուամբ գնալ յաշխարհէս. ապա կամի եւ ընտրելագոյն էր ինձ, թէ բնաւ եւ ծնեալ իսկ չէր զիս մաւր իմոյ յայս աշխարհս. եւ գտանել հնարս՝ զերծանել³ ինձ ի խղճես որ նեղէն զիս՝ աղաչեմ զԱստուած անդադար: 10 Բայց միաբանել խորհրդոյդ զոր դուքդ խորհիք, եւ ասել ձեզ, թէ լաւ է իմաստդ եւ արարեք՝ ոչ կարեմ ասել եւ չիշխեմ. վասն զի զԱրեաց ոյժն⁴ եւ ստամբակութիւնն քաջ գիտեմ, եւ զՅոռոմոց զթուլութիւնն եւ զխաբէութիւնն. եւ զձեր ծանուցեալ է փորձիւ իմ, թէ ո՛րպէս հարանց մերոց ուխտեցին երդմամբ, եւ ստեցին: 11 Եւ վասն Վրաց արքայի եւ Յոնացոյ զորս ասեք՝ Վիրք առանձին թեթեւ ինչ⁵ աշխարհ են եւ այրուծիով սակաւաւորք. բայց վասն Յոնաց ո՞ր գիտաց, հաւանի՞ն գալ թէ ոչ, որք չենն ի միջի եւ չերելին: 12 Բայց քան զամենայն՝ եւս առաւել յանձանց երկերուք, վասն զի մարդիկ⁶ սուտք էք եւ անվստահք: 13 Բայց եթէ զիս հարցեք, եւ զբանն իմ առնեք եւ հաւանիք՝ թողէ՛ք ի բաց զբաներդ, եւ զԱստուած աղաչեցեք միայն՝ գտանել հնարս իրացդ, որում դիւրին է առնել զոր ինչ եւ կամի. այլ յընդունայն եւ յանպիտան խորհուրդս ձեր զիս մի՛ աշխատ առնեք»:

14 Եւ լուեալ զայս ամենայն բանս նախարարացն Յայոց ի Մամիկոնենէն Վահանայ՝ ետուն պատասխանի միաբանութեամբ եւ ասեն, թէ «Չամենայն զոր ասացերդ՝ լի ասացեր, որպէս վայել է քում իմաստութեանդ. ճշմարիտ ասացեր⁷ եւ արդար. բայց զյոյս՝ մեր ոչ ի Յոռոմս եղեալ է եւ ոչ ի Յոնս, բայց նախ յողորմութիւնն Աստուծոյ, բարեխաւսութեամբ սրբոյն Գրիգորի, եւ ի մահ նախնեացն, որ նահատակութեամբ իւրեանց հաճոյ եղեն Փրկչին Քրիստոսի, եւ ապա ի մահ անձանց մերոց. քանզի լաւ համարիմք մի ժամ մեռա-

1 ԲԳՄ. ամենայնքն

2 ՏՏ. անյայտ

3 ՏՏ. եւ զերծանել

4 ՏՏ. ուժն

5 ԲԳՄ. թեթեւ ինձ

6 ՁԱՄ. մարդիկք

7 Ձ. ճշմարիտ ասացեր-ի փոխանակ՝ ճշտ, եւ վերելից՝ ասէր (ը-ն քերուածով)